



«Քայլ առ քայլ» բարեգործական հիմնադրամ

«Նախադպրոցական հաստատության
մանկավարժական աշխատողների
մասնագիտական կարողությունների և հմտությունների զարգացման»
ծրագիր

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարրական մաթեմատիկական պատկերացումների
զարգացումը նախադպրոցական տարիքում

Դաստիարակ՝ Հայկանուշ Ղազարյան

Մանկապարտեզ՝ «Հարժիսի նախադպրոցական
հաստատություն» ՀՈԱԿ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Ներածություն	2
2. Մաթեմատիկական ուղղությունները	4
3. Մաթեմատիկայի ուսուցման մեթոդները	6
4. Դաս մանկապարտեզում	8
5. Եզրակացություն	10
6. Օգտագործված գրականություն	11

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մաթեմատիկական գիտելիքների զարգացումը նախադպրոցական տարիքի երեխաների մոտ խիստ կարևոր է, քանի որ այդ գիտելիքներն են ձևավորում մտածողության տրամաբանությունը, խթանում երեխայի բազմակողմանի զարգացումը, զարգացնում հիշողությունն ու խոսքը: Ավելին՝ դրանք երեխայի մոտ զարգացնում են հետաքրքրասիրություն և նպատակասլացություն: Երեխաները սովորում են վերլուծել, համեմատել, սինթեզել, կատարել հաշվարկային գործողություններ, տրամաբանորեն մտածել, տարբերակել երկրաչափական պատկերները, թվերը, կողմնորոշվել տարածության մեջ:

Կարևոր է նշել, թե հատկապես ի՞նչ պետք է իր մեջ ներառի նախակրթարանի մաթեմատիկան, որպեսզի երեխայի մեջ զարգանա այս ամենը: Ներկայումս, կախված նախակրթարանից, մաթեմատիկական գիտելիքների դասավանդման ծրագրերը կարող են տարբեր լինել: Բայց կան մաթեմատիկական հիմունքներ, որոնք պարտադիր են ցանկացած նախադպրոցական հաստատության համար: Մանկապարտեզում ստացած գիտելիքները երեխաները կիրառում են առօրյա կյանքում: Այդ պատճառով էլ մանկավարժի խնդիրն է երեխաների մոտ հետաքրքրություն առաջացնել կրթական գործունեության նկատմամբ, տալ անհրաժեշտ տարրական մաթեմատիկական գիտելիքներ, երեխաներին տանել ինքնուրույն պատասխաններ և լուծումներ փնտրելու :

Սույն աշխատանքը միտված է ցույց տալու նախադպրոցական հաստատությունում երեխաների մաթեմատիկական գիտելիքների ձևավորման ու զարգացման ուղղությունները, մեթոդները, նպատակներն ու դրանց հասնելու ուղիները: Նաև բերված են կոնկրետ մեր՝ Տաթև համայնքի Հարժիսի մանկապարտեզի սաների մոտ կոնկրետ մեթոդների կիրառման ձևերն ու արդյունքները: Աշխատանքը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

1. Մաթեմատիկական ուղղությունները
2. Մաթեմատիկայի ուսուցման մեթոդները
3. Դաս մանկապարտեզում
4. Եզրակացություն

Առաջին երկու բաժիններում խոսվում է այն հիմնական մաթեմատիկական ուղղությունների և մեթոդների մասին, որոնք կիրառվում են նախադպրոցական կրթարաններում՝ անկախ տեսակից: Երրորդ բաժնում քննարկվում է այդ մեթոդների կիրառման ընթացքն ու արդյունքները կոնկրետ մանկապարտեզում՝ տարբեր տարիքային խմբերում:

Հետազոտության ընթացքում օգտագործվել է նախադպրոցական կրթության վերաբերյալ արտասահմանյան գրականություն, ինչը ապացուցում է, որ մաթեմատիկական գիտելիքների ձևավորումը կարևոր է երեխայի ինտելեկտուալ, բազմակողմանի զարգացման համար, և դրան պետք է պատշաճ ուշադրություն դարձնել:

ՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մաթեմատիկան որպես գիտություն բազմաբնույթ ու հետաքրքիր է: Նախակրթարանում այն ունի հինգ ուղղություն.

1. Քանակ և հաշիվ

Երեխաները պետք է

- իմանան առաջին տասնյակի թվերն ըստ հաջորդականության
- հասկանան «որքա՞ն» և «քանի՞» հարցերը
- հաշվեն թվերը ուղիղ և ետընթաց կարգով
- ստացված թիվը հարաբերակցեն հաշված առարկաների թվի հետ (1, 2, 3՝ ընդամենը 3 հատ)
- տարբերեն յուրաքանչյուր թվի նախորդը և հաջորդը (ավելացնել և պակասեցնել 1-ով)
- սովորեն տասի սահմաններում կարգային հաշիվը (n՝ բերորդն է ամենափոքրը)
- սովորեն տասի սահմաններում թվի կազմությունը
- սովորեն կազմել և լուծել պարզ թվաբանական խնդիրներ
- ճանաչեն գումարման և հանման գործողությունները և նշանները (+, -)
- սովորեն գտնել առարկաների և երևույթների նմանություններն ու տարբերությունները
- սովորեն օգտվել ընդհանրացնող բառերից (միրգ, խաղալիք. . .)

2. Մեծություն (մեծ, փոքր, հավասար)

Երեխաները պետք է

- իմանան չափը և քանակը
- կարողանան համեմատել (ըստ չափի, քանակի, գույնի, ձևի և այլն)
- իմանան, թե ինչ է նշանակում հավասար
- իմանան «մեծ և փոքր», «շատ և քիչ» հասկացությունները
- ճանաչեն համեմատության նշանները (=, ≠, >, <)

3. Երկրաչափական պատկերներ և մարմիններ

Երեխաները պետք է

- կարողանան տարբերել ձևերը
- տարբերեն հարթ և ծավալուն (տարածական) մարմինները
- կարողանան համեմատել պատկերները և մարմինները (ինչի՞նչ է նման)

4. Կողմնորոշում ժամանակի մեջ (ժամ, օր, ամիս, տարվա եղանակ...)

Երեխաները պետք է

- իմանան ժամանակի չափման միավորները
- կարողանան համեմատել (շուտ-ուշ, արագ-դանդաղ, առաջ-հետո)
- համեմատեն ժամանակի չափման միավորները (յոթ օրը մեկ շաբաթ է)
- ճանաչեն և համեմատեն տարվա եղանակները

5. Տարածություն (աջ-ձախ, առաջ-հետ, վերև-ներքև)

Երեխաները պետք է

- կարողանան ընկալել տարածությունը
- կարողանան ընկալել հեռավորությունն ու դիրքը
- իմանան առարկայի չափերը և ձևը տարածության մեջ
- տարբերակեն շարժվող և անշարժ մարմինները, համեմատեն դրանց դիրքերը

ՄԱԹԵՄԱՏԻԿԱՅԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ

ՄԵԹՈԴՆԵՐԸ

Մաթեմատիկան ոչ միայն առարկաների, դրանց հարաբերակցության, հատկանիշների, թվերի, երկրաչափական պատկերների և դրանց հետ կապված գործողությունների ուսումնասիրություն է, այլ նաև միջոց երեխաների աշխարհընկալման համար:

Երեխան նաև պետք է սկսի սովորել թվի կազմությունը, ինչը կօգնի նրան տարբեր խնդիրների և վարժությունների լուծման ժամանակ: Կարևոր է ընգծել, որ երեխայի մաթեմատիկական զարգացումը պետք է հանգի միայն նրան, որ երեխան սովորի հաշվել, չափել և լուծել խնդիրներ: Արդեն ավագ խմբում՝ հինգից վեց տարեկան երեխան առանձնահատուկ է շրջակա աշխարհը ճանաչելու ձգտումով, ցուցաբերում է հետաքրքրություն մաթեմատիկայի հանդեպ, պատկերացում ունի առարկայի հատկանիշների՝ գույնի, չափի, ձևի մասին, ճանաչում է թվերը, դրանց հետ կատարվող գործողությունները: Սակայն երեխայի գիտելիքների և կարողությունների պաշարը դեռևս համակարգված չէ: Նոր տեղեկությունները մշակվում են հետազոտական աշխատանքների՝

- վերլուծության
- համադրության
- համեմատության
- ընդհանրացման

արդյունքում՝ կարողությունների կատարելագործման միջոցով:

Տարրական մաթեմատիկական պատկերացումների ձևավորման գործընթացում մանկավարժը օգտագործում է ուսուցման տարբեր մեթոդներ: Դրանց ձևավորման, մշակման ժամանակ ցանկալի է դիտարկել մանկապարտեզի և դպրոցի համագործակցությունը: Տարրական դպրոցում մաթեմատիկայի ուսուցումը ենթադրում է երեխաների քանակական և տարածական իմացությունների բավական լայն շրջանակ, և նախակրթարաններում ոչ հաճախ են ամբողջապես լուծում այս խնդիրը: Շատ հաճախ երեխաները ձեռք են բերում մակեկեսային գիտելիքներ՝ առանց խորքային իմացության և ընկալման:

Կիրառվող մեթոդները կարելի է ընդհանրացնել հետևյալ խմբերի մեջ.

- գործնական
- տեսողական
- բանավոր
- խաղային

Մակայն առայսօր մաթեմատիկայի ուսուցման նախադպրոցական մեթոդիկայում չկան կոնկրետ ցուցանիշներ:

Պարապմունքներին առաջադրվող դիդակտիկ (զննական, բաշխիչ) նյութերը միջոց են երեխաների հետ տարվող կրթադաստիարակչական աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու համար: Արդյունավետ ուսուցման *փոխներգործուն, ինտերակտիվ* մեթոդները համահունչ են վիճահարույց և միջնորդված ուսուցման սկզբունքներին և ուղղված են երեխայի որոնողական և իմացական գործունեության ձևավորմանը, կարծիք հայտնելու կարողության զարգացմանը, ինքնուրույն կողմնորոշմանը: Փոխներգործուն մեթոդներն անհատակողմնորոշիչ են՝ նպատակաուղղված ուսուցման խնդիրների լուծմանը: Ցանկացած մեթոդի կիրառություն ենթադրում է երեխայի ինքնադրսևորման և արտահայտման անսահմանափակ ազատություն:

Ուսուցման որևէ կոնկրետ մեթոդ գործնականում որպես կատարյալ չի դրսևորվել: Ինչպես փորձը ցույց է տալիս, առավել ռացիոնալ արդյունք կարելի է ստանալ տարբերմեթոդների համադրության արդյունքում: Մեթոդի ընտրության ժամանակ պետք է հաշվի առնել

- ուսուցման նպատակներն ու խնդիրները
- տվյալ փուլում ձևավորվելիք գիտելիքների բովանդակությունը
- երեխաների տարիքային և անհատական առանձնահատկությունները
- անհրաժեշտ դիդակտիկ նյութերի առկայությունը
- դաստիարակի անհատական մոտեցումներն այս կամ այն մեթոդի նկատմամբ
- ուսուցման պրոցեսի անցկացման պայմանները

և այլն:

ԴԱՍ ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՈՒՄ

«Հարժիսի նախադպրոցական հաստատություն» ՀՈԱԿ-ում գործում է մեկ բազմատարիքային խումբ՝ 14 սաներով: Մաթեմատիկական պատկերացումների ձևավորման համար հաշվի ենք առնում հատկապես ա՛յդ առանձնահատկությունը, ինչպես նաև յուրաքանչյուր սանի անհատական ունակությունները:



Պարապմունքների ժամանակ կիրառվող մեթոդներն ընտրվում են և զուգակցվում՝ կախված թեմայից, ապահովելով անհատական մոտեցումը յուրաքանչյուր սանին:

Մեծ տեղ է հատկացվում գործնական մեթոդին, երբ սաներն ինքնադրսևորվում են, հաշվումներ են կատարում ձողիկների, տարբեր իրերի, խաղալիքների օգնությամբ, կատարում են բաժանում, գումարում, հանում, բարձրաձայնում անհասկանալի հարցերը, օգնում միմյանց՝ գտնել ճիշտ պատասխանները:



Դաստիարակին մնում է միայն ուղղորդել նրանց և օգնել ճիշտ կողմնորոշվել և ինքնադրսևորվել:



ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Տարրական մաթեմատիկական գիտելիքների ձևավորումը նախադպրոցական հաստատություններում ձևավորում է երեխային որպես անհատականություն, տալիս է ոչ միայն մաթեմատիկական, այլև լեզվամտածողական, աշխարհաճանաչողական գիտելիքներ: Շատ կարևոր է այս գործընթացում ցուցաբերել անհատական մոտեցում յուրաքանչյուր սանին, բացահայտել նրա ունակություններն ու կարողությունները, դնել դրանք ճիշտ ուղու վրա:

Կարևոր է նաև մեթոդի ընտրությունը: Երեխաները աշխարհն ընկալում են խաղերի և գույների միջոցով: Նրանց հետաքրքրություններն ու նախասիրությունները մեթոդների մեջ ներառելը ևս նպաստում է նյութի յուրացմանը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Մաթեմատիկանի պարապմունքները մանկապարտեզում:
Կրտսեր երկրորդ և միջին խմբեր»
Հ. Հարությունյան
Երևան, «Զանգակ», 2016

2. «Մաթեմատիկան մանկապարտեզում:
Ձեռնարկ մանկապարտեզի դաստիարակների համար»
Լ. Ս. Մետլինա,
Երևան, «Լույս», 1988

3. «Теория и методика математического развития дошкольников»
Учебное пособие
Щербакова Е. И.
Воронеж, «МОДЕК», 2005

4. «Обучение математике в детском саду»
Данилова В. В., Рихтерман Т. Д. и др.
Москва, «Academ A», 1998

5. «Материалы к урокам математики в I-III классах»
Уткина Н. Г.
Москва, «Просвещение», 1984